— Ես գիտեմ մի այլ, աւելի ցաւալի կորուստ, — ասաց Հայրիկը տխուր ձայնով եւ պատմեց հետեւեալ անցքը.

Մի անապատում, որ հայոց ծովակներից մէկի կղզում է գտնւում, յանկարծ միաբանութիւնը լսում է, որ կաթողիկոսը գալիս է վանքը եւ, որպէսզի նորին վեհափառութիւնը վանքի գրքերը իրանց ողորմելի դրութեան մէջ չտեսնէ, հաւաքում են բոլորը, լցնում են կթոցների մէջ եւ թափում են ծովը: Երբ նորին վեհափառութեան նաւակը մօտենում է կղզուն, նա նկատում է, որ մագաղաթի թերթիկները ջրի երեսին լողում են: Ալիքները նրանցից մէկը բերում է եւ խփում վեհափառի նաւակի կողքին: Նա ձեռքը մեկնում է եւ վեր է առնում դժբախտ թերթը: Պատահմամբ դա լինում է Խորենացու գրքի հէնց այն կտորը, որտեղ գրուած է լինում նրա սգաւոր ողբը, որի մէջ նա այնքան դառն կերպով նկարագրում է իր ժամանակի եկեղեցականների անպիտանութիւնները: Վեհափառի հանդէպ, նաւակի մէջ, նստած է լինում կղզու վանահայրը, որ դուրս էր եկել ցամաքը նրան ընդունելու: Վեհափառը տալիս է նրան կարդալու սգաւոր ողբի հետեւեալ տողերը. «Վարդապէտք տխմարք» եւ այլն:

— Այդ պատմութիւնը որքան հետաքրքիր, այնքան եւ տխուր է, — ասաց Ասլանը: — Բայց ես լսել եմ, որ ձեր կաթողիկոսներից մէկը նոյնպէս ազատ չէ եղել մի այդ տեսակ մեղքից. նա իր նախորդների յիշատակները ոչնչացնելու համար այրել է տոել նրանց գործերի բոլոր ատենական թղթերը: Բայց ես շատ ուրախ եղայ, որ ձեր ցուցակի մէջ գտայ, բացի գրքերի անուններից, եւ մի ամբողջ շարք զանազան կոնդակների, զանազան հրովարտակների, պարսից եւ տաճկաց թագաւորներից ստացուած, զանազան պայմանագրերի եւ հին կալուածագրերի, այդ բոլորը կարող է առատ նիւթ տալ պատմութեան:

Մատենադարանի մի առանձին պահարանում հաւաքուած էին հայոց ամենահին տպագրութիւնները, որոնք եղել են մի քանի դարեր առաջ Վենետիկում, Հռոմում, Միլանում, Նոր-Ջուղայում, Ամստերդամում եւ այլ տեղերում:

Գրչագրերը քննելուց յետոյ մտանք երրորդ սենեակը, որ աւելի ընդարձակ էր, քան առաջինները:

— Այդ մեր թանգարանն է, — ասաց Հայրիկը, — բայց դեռ աղքատ թանգարան, որովհետեւ շատ ժամանակ չէ, որ գոյութիւն ունի:

Չնայելով, որ Հայրիկը խիստ համեստութեամբ էր վերաբերւում դէպի թանգարանը, բայց այդ սենեակը, աւելի քան միւսները, գրաւեց իմ ուշադ-